

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարին համար 12 ֆր.
 արեկուսի 7 " "
 վեցամսայ Արսասահմանի
 համար 15 ֆր.
 վեցամսայ 8 " "
 Անտիկալի համար
 արեկուսի 3 ֆր.
 վեցամսայ 1.50 " "

Ծանուցում ենք որ սուրբ ին 40 սանթիմ իսկ վերջին 20 սանթիմ է, երեքին սուկի սնուցանելու համար 20 0/0 գնի կրայի:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ
 դրկի խմբագրության
 հասցեին

Редакция на вѣстникъ
 "Шаржумъ"
 Варна

Redaction du journal
 "Charjoum"
 Varna (Bulgarie)

Պուշկարին համար
 ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
 ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրքերի վաճառքի համար
 ձեռք

ՇՈՒՐԻՄԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻԿՎԱՐԸ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Դիլիսաուր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԷՆԷ ԵՐԱՇ. ԽԱՒՈՐԸԱՆ ԱՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՆ ԱՆՍՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փափագողները կրնան իրեն գրիմել Զար-Պորիս փողոց Վառնա

ԿԻՐՔԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Մեր հրատարակարական կեսնքի տխուր երեւոյթներէն մին ալ կիրքի ներկայութիւնն է մեր բոլոր գործերուն մէջ. ինչոր մը երեւան ելլէ թէ չէ, առաջ գրիչները կը գործեն, եւ իւրաքանչիւր գրող կը փորձէ առիթէն օգտուիլ հին կամ նոր ատելութեանց յագուրդ տալու, զսպուած կիրքերը արծարծելու, իրեն անհաճոյ անձին աւ կամ նա կերպով քար մը նետելու բաղձանքով վերջապէս: Մեր հասարակութիւնը միշտ հանդիսատես կըլլայ պարագաներու՝ ուր յուզուած խնդիր մէկ կողմ ձգուած՝ երկու վիճողներ իրարու պարսաւը կրնան, գիրար նախատինքներու, անուանարկութեանց, մերկացումներու տարափնտրով կողոզեն ու մկկմէկու կենսագրականը կը գրեն փոխադարձաբար կարելի եղածին շափմութ գիծերով: Ինականաբար, այս գոյնի տակ յուզուած խնդիր մը, փոխանակ լուծուելու, ալ աւելի բարդ հանգամանք կը ստանայ, հասարակութեան առջեւ ան իր արժէքը կը կորսնցունէ եւ անձն է որ կը դառնայ զինքնէ ալիս: Ու այս միջոցը այնքան յաճախ կրկնուած է որ, շատ անգամ հանրային գործիչները կամ յեղափոխական կուսակցութիւնները ժողովրդին ուշադրութիւնը բուն խնդրէն կամ իրենց ո եւ է մէկ գործունէութեան զէմ եղած քննադատութենէ մը վրիպեցնելու համար կը սկսին հակառակորդ կողմին զէմ զուտ անձնական գոյնի է նս ինքն իւր անն եր ընել, անոր զէմ կիրքեր գրգռել, պղտորել խնդրին յստակութիւնը մինչեւ որ բոլորովին մոռցուի կամ իր այժմէութիւնը կորսնցնէ: Աւելորդ է ըսել թէ շատ անգամ ալ կը յաջողին:

Միւս կողմէ ժողովուրդն ալ, այնքան կրթուած այդ օրով, յուզուած խնդրի մը մէջ կիրք կը փնտռէ. կը

նայի թէ մէկուն զէմ յարձակում կա՞յ կամ ի՞նչ նոր կարգ մէջ տեղ ելած է, եթէ ամենալուրջ դիտողութիւններով լի խնդիր մը յուզեն, ոչ ոք պիտի հետաքրքրուի անով, բացի քանի մը փոքրաթիւ ընտրեալներէ. եթէ կիրքեր չեն յուզուած հոն, եթէ ակնարկութիւններ չիկան սս կամ նա անձին, գործիչին, թաղականին, հոգաբարձուին կամ ուսուցչին զէմ: Ու այս ախտը այնքան բուռն է որ, նոյն իսկ չեղած տեղը կը ստեղծեն, եւ յոգուածագրի մը իւրաքանչիւր հատուածին մէջ մէյմէկ ակնարկութիւններ կը տեսնեն իրենց հաճոյ կամ անհաճոյ անձերու ուղղելու:

Զարգացումի պակասն է որ մեր հասարակութեան միտքը կը մոլորեցնէ այսպէս: Անկարող, կամ աւելի ճիշտ դեռ անպատրաստ խնդիրները իրենց իսկութեամբն ուսումնասիրելու, մինչեւ որ անձի մը զէմ յարձակում չը տեսնեն, չեն հետաքրքրուիր ո եւ է խնդրով:

Հարկ չի կայ պարզել այն միասնները որ պատճառեց ու կը պատճառէ դեռ կիրքերու պոթկուտը: Այսքան ատեն, անցած դարձանքը համոզելու էին այլեւս զմեզ թէ կիրքերով, բանակցութեամբով, անձնաւորեալ վէճերով ո եւ է խնդիր չի լուծուիր, այլ ընդհակառակը քառասային վիճակի կենթարկուի: Հետեւ թողունք մեր կրքերը հանրային խնդիրներու մէջ, բոլորովին անհաւանդորէն վերաբերուինք ամէն հարցի, ու պիտի տեսնենք թէ որքան հեշտու պիտի պարզուին, լուծուին անոնք:

ՇՈՒՐԻ

Ուսուցչական Մարմին Ֆիլիպպի Ազգային Երկսեռ Վարժարանաց թիւ 25 Ապրիլ 12, 1906

Ան պատուարժան Ուսուցչական մարմին Ազգ. վարժարանաց Ի Ռուսնուք

Ֆիլիպպի ազգ. երկսեռ վարժարանաց Ուսուցչական մարմինը իր ապրիլ 10 թ. օրը արտակարգ նիստին մէջ զբաղելով Ռուսնուքի ուսուցչական մարմնի թիւ 84, մարտ 21 թուակիր շրջաբերականով, սկզբունքով հա-

մաձայնեցաւ «ուսուցչական միութեան» մը կազմութեան և յարմար դատեց շրջաբերականին մէջ նշանակուած կէտերէն զատ, բաղձացուած միութեան յաջողութեան համար հաւաքման մը կարելիութեան կարելորագոյն խնդրովը զբաղիլ:

Առ այս ի մօտոյ ուսումնասիրած ըլլալով պուլկարահայ ուսուցչութեան պայմանները և ի նկատի ունենալով որ՝

Ա. բոլոր պուլկարահայ ուսուցիչները պաշտօնի կը կոչուին միայն տարեշրջանի մը համար, որ կը լրանայ յուլիսի սկիզբերը, իսկ յուլիսի սկիզբէն սկսեալ կը մնան անպաշտօն և երկու ու աւելի ամիսներ կը հարկադրուին հո՛ս ու հո՛ն դրաւոր և շաա անգամ անձամբ հոգաբարձութիւններու գումարները ափ առնել՝ յառաջիկայ տարեշրջանի համար պաշտօն մը ձեռք ձգելու նպատակով և թէ՛

Բ. Այս անորոյ վիճակը ոչ միայն հաւաքում մը անկարելի կըլնէ, այլ բոց աստի, ուսուցչին բոլոր միտքն ու խելքը գրաւելով, չապահովեր անոր հարկ եղած հանգիստն ու անդորրութիւնը տարբեր խնդրոյ մը վրայ մտածելու:

Որոյցն՝ ինչպէս Ռուսնուքի նոյնպէս և բոլոր պուլկարահայ ուսուցչութեան ուշադրութիւնը հրաւիրել սոյն ամենակարեւոր կէտին վրայ և առաջարկել հետեւեալ միջոցը՝ հաւաքումը անկարելի ընող սոյն արգելքի բարձման համար:

ա. Մայիս ամիսէն սկսեալ իւրաքանչիւր ուսուցչական մարմին պաշտօնապէս պարտի գիմել վարժարանին հոգաբարձութեան, որպէս զի այս վերջինը փութայ իրեն յանձնուած վարժարանին ուսուցչական մարմինը կազմելու մինչեւ յուլիս 15:

բ. Վիճաբանական ժողովներ կազմել, կոչեր հրատարակել և ի մի բան ուսուցչական միութեան մը կազմութեան ի նպատակ պրոպագանդա ընել ժողովուրդին,

հոգաբարձութեանց և թաղ խորհրդոց, որպէսզի վերջինները ուսուցչական խումբի կազմութիւնը դպրոցին վերաբացման օրերուն ձգձգելու յոռի սովորութեան հրաժարելով, աճապարեն օր առաջ իրենց ուսուցչական մարմինները կազմել վերջնականապէս, ինչպէս որ ներկայ կրթական նախարարի օրով 1904 թուականին մասնաւոր շրջաբերական մը հրատարակուեցաւ, ըստ որում պուլկար ազգային և մասնաւոր վարժարաններու հոգաբարձութիւնները պարտին առ առաւելն մինչեւ յուլիս 15 տեղւոյն կրթական տեսչութեան ներկայացնել իրենց ուսուցչական մարմինը, հակառակ պարագային կրթական տեսչութիւնը իրաւունք կուտենայ ինքը նշանակել յուլիս 15էն ետք իրեն ներկայացող ուսուցիչները:

Սոյն կրթական օրէնքը աւելի երկար լուսաբանութեան մը կարօտելով ուսուցչական մարմինս պաշտօն տուաւ իր անդամներէն Ս. Հինտլեանին, յոգուածով մը լուսաբանել զայն պուլկարահայ մամուլին միջոցաւ:

Վերոգրեալ պարագայէն անկախ, ուսուցչական մարմինս հաւաքումը կազմակերպելու փառքէն մշուած՝ ուսուցչութեան ուշադրութիւնը կուզէ հրաւիրել նաեւ հետեւեալ կէտերու վրայ:

Որչափ որ ալ փափաքելի ըլլայ ամբողջ ուսուցչութեան ներկայութիւնը, հաւանական է որ պուլկարահայ ուսուցչութիւնը ինչ ինչ պատճառներով չը պիտի կարենայ ամբողջովին մասնակցիլ հաւաքման, ուստի բացակայող ուսուցիչներուն կարծիքը բունաբարելու տխուր պարագայէն խոյս տուած ըլլալու համար, անհրաժեշտ է պատգամաւորութեան գրութիւնը ընդունիլ և իւրաքանչիւր քաղաքէ մասնակցիլ փափագող ուսուցիչները ընդունիլ իբրեւ նոյն քաղաքի պատգամաւորներ. ճամբու ծախքի համար գոյացած

գումարը հասարակապէս բաժնե-
լով իրենց միջև :

Պուկարահայ ուսուցչուհիներ-
րու ներկայութեան պէտքը շեշ-
տելով և նկատելով որ մեր մի-
ջավայրը և բարձրը օտար քա-
ղաքի մը մէջ ընտանիքէ հեռու
բնակելու համար դիւրութիւն-
ներ չեն ընծայեր իրենց, ու-
սուցչական մարմինս որոշեց
պատ. ուսուցչական մարմնոյդ մի-
ջոցաւ դիմել Վառնայի պատ.
ուսուցչական մարմնոյն, որպէս
զի այս վերջինը ջանայ հաւաք-
ման մասնակցիլ փափաքող ու-
սուցչուհիներու համար ընտա-
նիքներու քով բնակավայրեր
պատրաստել՝ հաւաքումէն մի-
քանի օր տալ :

Ուսուցչական մարմինս Ռուս-
ճուքի ուսուցչական մարմնոյն
թիւ 84 շրջաբերականին մէջ
նշանակուած կէտերուն վրայ կը
յաւելու նաեւ հետեւեալ լրացու-
ցիչ կէտերը, որոնք ոչ նուազ
կարեւորութիւն ունին .

1. Պուկարահայ ուսուցչական
միութեան կազմակերպութեան
ձեւը (կանոնագիր և գործադիր
մարմիններ) :

2. Ուսուցչական միութեան
գործունէութեան թաքթիքը (իր
յարաբերութիւնները պետական
և ազգային կրթական իշխանու-
թեանց հանդէպ) :

3. Ուսումնասիրութիւն Պուկ-
արիոյ և ազգ. սահմանադրու-
թեան կրթական օրէնքներու :

Ուսուցչական մարմինս ձայ-
նակցելով Ռուսճուքի մարմնոյն
առաջարկած նիւթակառմիջոց-
ներուն, կառավարիչ տեղական
հոգաբարձութեանց հակակշռեն
(քօնթրօլ) ենթարկել սարքուե-
լիք ներկայացումներն եւայլն,
ժողովուրդին լիակատար վստա-
հութիւն ներշնչելու և անտեղի
խճճածանքներու առիթ չը տալու
համար :

Հաւաքման մասնակցելու փա-
փաքող ուսուցչիները ճամբու
ծախքէն զատ պէտք է ստանան
տասն օրուան համար օրական

գոնէ երկու ֆր. ծախք, քանի
որ կրնայ պատահիլ որ մինչեւ
նոյն թուականը ուսուցչիները
լիովին ստացած չըլլան իրենց
ամսավճարները և ասկէ զատ ի-
րենց ստացած ամսականին ան-
բաւականութիւնը չթողաւոր
իրենց ընտանիք պահել տեղ մը
և առանձին ապրիլ մի ուրիշ տեղ :

Այս ծախքերէն զատ աւելցած
գումարը յանձնել տեղական հո-
գաբարձութեան ի փոխարէն պաշ-
տօնական ընկալագրի մը մինչ
ի հաստատութիւն ուսուցչական
միութեան սնտուկին :

Ուսուցչական մարմինս կը կար-
ծէ թէ՛ բազմացուած միութիւնը
գործնական հոգի վրայ դնելու
կենսական պայմաններէն մին է
նաեւ նախնական պատրաստու-
թեան . համբարչութեան և գա-
ղափարական համաձայնութեան
մը գոյութիւնը . ինչ որ կարելի
է ձեռք ձգել միայն մամուլի մի-
ջոցաւ զանազան խնդիրներու
լուսաբանութեամբ և կարծեսոց
փոխանակութեամբ . Առ այս մի-
լիպէի ուսուցչութիւնը ջերմա-
պէս կը հրաւիրէ իր պաշտօնա-
կիցները որպէս զի փութան ի-
րենց կարծիքները յայտնել հը-
րապարակաւ և միեւնոյն ատեն
կառավարիչ որ իւրաքանչիւր
փափաքող ուսուցիչ առաջադ-
րուած կէտերէն միոյն վրայ
պատրաստուիլ ընդունի ժողովին
մէջ վիճարանութեան նիւթը
տայ, որով գործը կը կազմա-
կերպուի և անոր լուծումը կը
դիւրանայ ու կարելի կըլլայ .
փափաքելի է որ փափաքող ու-
սուցիչը յայտնեն իրենց բնու-
րած նիւթը պատ. մարմնոյդ
ի դիտութիւն :

Նոյնքան կարեւոր և անհրա-
ժեշտ են նաեւ վիճակագրական
ճշգրիտ և մանրամասն տեղեկու-
թիւնները իւրաքանչիւր վար-
ժարանի մասին : Առ այս մար-
մինս կառավարիչ պատ. մարմնոյդ
պատրաստել մասնաւոր հարցա-
րան մը տրուելիք տեղեկութիւն

որ ամենքին ալ խաթրը չկտորեմ :
Կայծեմ աւելորդ է ըսել թէ հա-
կառակ Հիւսնի չափուչին յայտնած
կասկածներուս, առջի բոլորին իսկ
հասկցած էի քօնթրօլի այս հրաւե-
րին շարժառիթը, երկուան զէպքին
համար էր աս շատ պարզ էր. միայն
սա պարզ չէր թէ ինչ դեր վիճակ
ուած էր ինծի այդ խնդրին մէջ և ա-
հա այս մութ կէտն էր որ կը վախ-
ցնէր զիս : Բայց քիչ մը ետքը,
երբ Հիւսնի չափուչ սիկարէթս ու-
սուցչս համտեսիլէ յետոյ իր ա՛յն-
քան տեւական քարեկամութեան հիմ-
քը դրաւ, թէեւ քիչ մը քօղարկեալ
կերպով բայց և այնպէս յայտնեց
որ ես իբր վկայ կը կանչուէի, Ասոր
վրայ սրտիս մուրճը բաւական մեղ
մացուց իր հարուածները. մտածեցի
կերթամ տեսածս տեղին տեղը կը

ները կանոնադրելու նպատակով
և էթէ իր ժամանակը չթողաւոր
բեր . նոյն իսկ ուսուցչական
մարմինս կընդունի պատրաստել
և զրկել ձեռ միջոցաւ միւս վար-
ժարաններուն :

Համոզուած ըլլալով որ ուսուց-
չական միութիւնը՝ իրբեւ հասա-
րակական բարձր խնդիր մը, կը-
նայ շատ մը խոշնգոտներու բազ-
միլ կրկին և կրկին կը հրաւի-
րենք մեր յարգելի պաշտօնա-
կիցները, որպէսզի ու է ջանք
չը ինչայն և ի պահանջել յար-
կին չը հրաժարին նուազագոյն
մաքառում մը մղելէ ի սէր և ի
արդիւնաւորում պուկարահայ
կրթական գործին :

Ի դիմաց միլիպէի ուսուց-
չական մամուլի
Ստեփան Մ. Հինտլեան

ՆԱՄԱԿ ԼՕՆՏՈՒՆԷՆ

Ռ Ո Ս Ա Չ Ա Տ Ա Կ Ա Ն Ի Ն Ե Ր Ը
Ե
Տ Ո Ի Մ Ա Ն
(Շար. Անխոտր քիւիկ եւ վերջ)

Ա.ՉԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆԸ ՈՅԺԻ ՎՄԱՅ.
Մինչև սոյն յօդուածը գրած բո-
լորէս եղած արդիւնքները հոյս կու-
տան որ, Ռուսաստանի առաջին ներ-
կայացուցիչներու ժողովին մէջ ազա-
տակարանութիւն պիտի ունենան վճարող
մեծամասնութիւն մը : Մայրաքաղաք
Վիպակապոստի քաղաքները չկան և չոկ
տեմբերանները, ըլլալով հանդերձ
շատ աւելի բազմութեամբ պահպա-
նողականները, անչառն մեծամասնու-
թիւն մը կը կազմեն բազմամասն
սահմանադրական- ուսակապետական-
ներու, յառաջիմականներու և
գիւղացիներու հսկայ փաղանգին .
Հետաքրքիր է կարողալ այս շարժուման
հեռագիրները բոլոր այն թղթակից-
ներուն որոնք, վեց ամիս առաջ, կը
ծաղրէին ազատ տուժալի մը գոյու-
թեան միաբը՝ և որ հիմա ի են ժո-
ղովրդական յաղթանակին գրուա-
տիքներով :

Ընտրութիւնները, անչուշտ, կա-
տարեալ չեն տակաւին . բայց 27 ցա-
ւառներ եւ մեծ քաղաքներէն շատերը
թուէարկած են արդէն : Ընտրու-
թեանց ընդհանուր հետեւանքները
կասկածէ դուրս են այլ եւս : Պէտք է

խոստովանիմ որ, եթէ կը ներէր
քիչ մը ինքնաշնորհաւորում ունե-
նայ գրեթէ նոյնքան հպարտ կզգամ
ինքզինքս արդարաւս միս մէջ Ռու-
սաստանի նկատմամբ որքան էի իմ
առաւել մանրամասն գուշակումե-
րուս մէջ այս երկրի ընդհանուր ընտ-
րութեանց համար . Երբ Ռուսաստան
էի կը կրկնէի մշտապէս թէ՛ եթէ
ընտրութեանց առանձնաշնորհումը
կուզեիւ եւ ոստիկաններու ալ յանձ-
նէին, որոնք թոյլ կուտային լոկ
տխմարներ ու ոստիկաններ ընտրու-
լու, նման գումարում մը պիտի չը
թերանար արձագանք տալէ ազգային
զգացումներուն, եւ ձայն մարձրաց
նել Ռուս ազգին դրական ունեւորու-
մու պահանջներուն համար :

Յուսալի է որ այն յոռետեսները՝
որոնք կը հեղեղին Տուժալէն բարձր
մը յուսուլու գաղափարը պիտի վերս-
տին նկատի առնեն իրենց կարծիքը՝
աչքի առաջ ունենալով ընտրական
արդիւնքները :

Գեղ.Ջ.Ա.Կ.Ա.Ն. ՈԳՆԻՈՐՈՒԹԻՒՆԻՆԸ.

Չէմստովորսց մը, որ անցեալ Սեպ-
տեմբերին մեծապէս համակիր էր
Տուժան բողոքովին պայքող ընելուն,
նամակ մը գրած է ինձ վերջերս Սա-
մարայի նահանգէն, ուր կողատէր
մըն է ինք . Ուրիշ բան հարող չեմ
ընել բայց եթէ մէջ բերել հատուած
մը իր նամակէն ուր ցոյց կը տրուի
թէ ինչ ազդեցութիւն յառաջ բերած
է կայսեր կոչը ժողովրդին վրայ .
Յիշեալը կը գրէ .—

«Ընտրութիւնները կատարուելու
վրայ են Ռուսաստան, եւ հետեւանք-
ները խիստ հեռու յուսակապետական
ըլլալէ Մեր հետադի գիւղացիները
իրենք անձամբ կազմեցին թիկնածու-
ներու ցանկը եւ քուէտրեկցին միա-
համուտ : Եթէ Սամարա նահանգի
միւս վեց գաւառներն ալ միեւնոյն
ձեւով քուէ տան, մեր 13 անգամե-
րը պիտի քուէարկուին 181 քուէար-
կուներու ժողովով մը, որոնց գլխ
130 հոգին գիւղացիներ են :

Բոլոր այս ընտրութիւններու մի-
ջոցին, շտ նայելով վեց շարքէ
իվեր կուսակցութիւններու միջև
տեղի ունեցած կատաղի պայքարին,
բունութեան կամ խանգարումի խօսք
մը իսկ տեղի չունեցաւ, ոչ ալ ան-
կարգութեան ու լրբութեան դէպք
մը, թէպէտեւ հեղ մը 500 է աւելի
ընտրողներ էին հաւաքուած եւ քուէ-
արկոււմը տեւեց ամբողջ երկու օր :
Պէտք է յիշել որ ընտրողներէն
շատ շատերը հարկուտ որ մղոն հեռու
տեղերէ եկած էին իրենց քուէն ար-
ձանագրելու, գրեթէ անանցելի ճա-

ՍՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

ԸՆԿԵՐՈՉՍ Յ. ԱՂԱՍԵՐԻՆ

(Շար. Անխ. քիւիկ)

— Խնդրեմ, խնդրեմ, զապթիյէ
աղա՛, նստեցէք, սիկարէթ մը հրամ.
մեցէք, ձօ՛թ աղոս սուրճ մը ըսէ :

— Ես զապթիյէ չեմ—դիտել տուաւ
քօնթրօլի պէյրին խղճամիտ գործակա-
տարը, որու հետ այն ատեն մտքս
իսկ չէի կրնար անցընել որ ա՛յնչափ
պիտի մտերմանայինք ետքէն—ինծի
կըսեն Հիւսնի չափուչ, չէի՞ր ճանչ-
նար զիս, տարօրինակ բան, այս քաղ-
քին մէջ զիս չճանչցող չկայ, չուկա,
չէն անցած ատենս մեծէն մինչև
փոքրու ամենքն ալ բարեւ կուտան,
ամեն կողմէ սուրճի կը հրաւիրեն,
բայց ես ա՛յնչափ ժամանակ չունիմ

պատմեմ ասով ինչ վնաս կրնայ հաս-
նիլ ինծի, ընդհակառակը թերեւս
Առաքելին ալ օգուտ մը տալ :

Անմիջապէս գործերս կարճ կապե-
լով ընկերացայ Հիւսնի չափուչին,
ձամբան բազմավաստակ ծերուկը քա-
նի մը խոշոր գրուագներով պատկե-
րացոյց ինծի իր փառաւոր կեանքը,
Մօսկօֆի պատերազմին մէջ իր կա-
տարած անկարելի սխրագոյծութիւն-
ներէն սկսած մինչև իր արդի պաշ-
տօնին անհնաբին զօնարութիւն-
ները : Իսկ ես, թէեւ անընդհատ
հիացական բացագոսնութիւններ կը
յեղիեղէի բայց ճիշտն ըսելով շատ
քիչ բան կըրցայ լսել, որովհետեւ
միտքս այդ պահուն զիս սպասող ան-
ծանօթին վրայ կը շայշարուէր :

Երբ վերջապէս սէրային ընդարձակ
բակէն անցնելով շէնքին դռնէն ներս

մտանք—վեր պիտի ելլենք—ըսաւ
Հիւսնի չափուչ առաջին յարկին սան-
գուղները ցուցնելով : Բայց հազիւ
ոտքս առաջին աստիճանին վրայ դը-
րած էի, երբ մէկը փէչէս բռնեց .

— Է՛յ, ո՛ւր կը քիչս այդ աղտոտ
ոտքերով :

Սովորական տարազով թիւք մըն
էր, ձեռքը կառուցանով մը որու
ծայրը սագի փետուրներու վրէժ մը
կապուած էր : Առանց խոսելու ժա-
մանակ տալու իր այդ տայօրինակ
վրձինը հապճեպով թափ առաւ կօ-
շիկներուս վրայ ու ավը բո՛ւնալով
տասնոց մը պահանջեց : Նոր նկատե-
ցի որ միեւնոյն տեսակ գաւազաննե-
րով զինուած քանի մը հոգի կային
գրան մօտ, և Հիւսնի չափուչ բա-
ցատրեց որ ասոնք կապալով առած
էին կառավարական շէնքին մաքրու.

նապարհներէ եւ ծախսերը իրենց սե-
փական գրպանէն վճարելովս :

Ինչպիսի՞ հակասութիւն մըն է սա-
հանդէպ Բրիտանացի ընտրողին մերժ-
մանը՝ որ, մինչեւ օթոսօպիլ մը չը
զրկուի իրեն, չերթար քուէ արձա-
նագրելու վայրը, իր քուէն տալու
համար (*):

ԱԶԳԻՆ ԶԼՅՆՐ.

Այն յոռետեսները որոնք կը հա-
ւատային թէ լու բան մը կարելի չէ
որ դուրս գայ ինքնակալ Ռուսա-
տանէն, անշուշտ հիմա պիտի ետ
քաշուին նոյն դիրքէն եւ ձեռք առ-
նեն ուրիշ մը, որ կը յուսամ պիտի
ըլլայ նոյնքան խախուտ: Այլ եւս
չեն կրնար ուրանալ որ ազգին բազ-
մանքները ներկայացնող Տուժմա մը
հնար է ընտրել, սակայն հիմա ալ
պիտի յայտարարեն որ Տուժային
պիտի թող չը տրուի երբէք իր ու-
ղածին պէս շարժիլ: Եւ երբ փորձէ
ատանկ բան մը ընել, պիտի զրկուի
իրեն շնորհուած ոյժերէն ու առանձ-
նաշնորհումներէն:

Պիտի տեսնենք Շատ բան կստու-
ուի որու բարւամտութեաններու ի-
մաստութեանն եւ հասկացողութեանն
նթէ կարողանան երեւան բերել ի-
րենց մէջէն լիտեր մը, որ ըլլայ մի-
անգամայն աներկիւղ ու շրջահայեաց,
գործնական ու եռանդուն, անխուսա-
փելիորէն տ'ըր կը դառնան կացու-
թեան եւ ծարր ուրախ պիտի ըլլայ
յիւրաւի, տեսնել վերջապէս արժա-
նաւոր անկախ մարմին մը համայնա-
սէր քաղաքացիներու, որուն վրայ
կարող է դնել պատասխանատուու-
թեան տաժանի ի բռան մէկ մասը:

(Թրգմն. Մ. Յ) Վ. Դ. ՍԴԵՏ

(*) Տեղն է յիշել հոս որ ընտրու-
թիւններու ժամանակ, Անգլիա, ինչ-
պէս եւ Ամերիկա, կառքերը մեծ դեր
կը կատարեն: Վերջին ընդհ. ընտ-
րութեանց ատեն քուէարկու քա-
ղաքները կը վխտային օթօսօպիլներ-
ով եւ յաջողութեան զօրաւոր ազ-
դակներէն մէկն ալ ատոնցմէ շատ
ուեննալն էր: Հասկանալի կը ըլլայ
սա, երբ ըսենք որ բարամէջ ընտ-
նելու համար ոմանք առաւել քան
8-900 անգ. ոսկի են վատնած Անգ-
լիոյ վերջին ընտրութեանց ատեն:
Կ. Թարգ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէ 13 ապրիլ

Ժամանակէ մը ի վեր «Շալժու-
մ»-ի մէջ երեւցած քննադատական

թեան հսկելու գործը: Մաքրասիրա-
կան և ելեմտական այդ կրկնապէս
հանճարեղ թիւրք գիւտին առջեւ հի-
ցած եւ գրպանս ալ մանրուք չունե-
նալուս՝ տասնորի տեղ քոսաստեղնոց
մը տուի և առաջին յարկը ելանք:
Հոս սանգուղին գլուխը գտնուած
ղուռ մը բանալով Հիւսնի չափուչ
հանդիսաւոր բարեւ մը զրկեց ներս և
ինձի դառնալով՝

— Զօրպաճի՛, հոս կը հանգստա-
նաս, մինչեւ որ քեզ կանչեն—ըսաւ
ու ինք դարձեալ վար իջաւ:

Այս սենեակը, ինչպէս տեսնեն կը
հասկցուէր՝ հաստատութեան յիսնվէ-
օճաղին՝ պիտի ըլլար: Մէկ անկիւնը
կոթնած էր սուրճի զիւխարի մրոտ
օճախը, քովը հին սեղան մը սրճա-
փայլ ջրով լի խոշոր տաշտով մը,
Ֆինճաններով ճզվէներով, նարնի-

յօղուածները կուսակցութեան ուղ-
ղութեան մասին, սկիզբները մեզի
նման յեղափոխական գաղափարի
պարզ համակիրներուս, այնքան ալ
հաճելի չէր երեւար, ու մենք կաս-
կածանքով կը վերաբերուէինք այդ
գրութիւններուն: Սակայն տեղի ու-
նեցող վերջին շրջանական ժողովը,
ի՛նք եկաւ հաստատել թէ, կուսակ-
ցութեան մէջ մէկէ աւելի թերի
կողմեր կան: Այն խնդիրները որոնք
«Շարժում»-ի սիւնակներու մէջ ձե-
ծուեցան, մեր շրջանական ժողովն
ալ զբազեցուցին երկարօրէն. հոն
ալ փափաք յայտնուեցաւ տիրող ան-
ուղղութեան ու երկզիմի ընթացք-
ներու վերջ տալ, որոշել թէ տաճ-
կահայ դատին համար մեր կուսակ-
ցութիւնը ի՞նչ կերպ եւ ի՛նչ սեղ-
ղութեամբ պիտի գործէ. ուստիայ
դատին հանդէպ ի՛նչ ծրագրով պիտի
ընթանայ, ընկերակցական կուսակ-
ցութեանց վարդապետութիւններուն
եւ անոնց գործելակերպին պիտի հե-
տեւի՞ թէ ոչ: Այս կարգի խնդիր-
ներու շուրջը մեր շրջանական ժո-
ղովը երկար ժողովներ ունեցաւ:

Այս շրջանական ժողովը զբաղե-
ցաւ նաեւ Վարդօի խնդրով, ամսոյս
Յի նստին մէջ, Հարկ չեմ համարիր
ծանրանալ եկած պատգամաւորներուն
ողորմելիութեան վրայ, Վարդօն ի-
րաւունք ունէր այդ տեսակ ստրուկ
լաքէներու ժողովին ներկայանալ
մերժելու: Ինչ որ է, այդ նիստին
մէջ վիճաբանութիւններ կը սկսին,
որոնք հետզհետէ կը տաքնան, եւ
ճիշդ այն պահուն, երբ քանի մը
տաք գլուխ ֆէտայիները կառաջար-
կին տէրօր ընել Վարդօի վրայ,
ժամը 11 ու կէսին, յանկարծ երկրա-
շարժի ցնցում մը կը զգացուի: Մեր
քաջարի ֆէտայիները, դեղնած,
սրտերնին թունդ ելած, կը լռեն,
ու իրենցմէ մին կը համարձակի վեր-
ջապէս դիտել տալ թէ, այս զուգա-
դիպութիւնը լաւ նշանակութիւն չու-
նի, թէ այս երկրաշարժը ընտրութեան
գաղտնի ուժերուն մէկ ցոյցն էր ի-
րենց ուղղուած», ո՞վ գիտէ ինչ զէչ
հետեւանքներ պիտի ունենայ, ե-
թէ ոճրագործական որոշում մը տանք
կը յարէ, լաւ է որ սասնկ ցոյց մը
եղաւ: Ուրիշ ընկեր մը, նմանապէս
երկրաշարժի սարսփին տակ, կառա-
ջարկէ Վարդօի խնդիրը փակել եւ
ուրիշ ժողովի մը ձգել, այդպէս ալ
կը ըլլայ: Վերջապէս, ինչպէս որ կի-
մանանք, որոշուեր է այդ խնդրին
լուծումը ընդհանուր ժողովին թո-
ղով:

լէներով, աղտոտ քուրջներով եւ այլ
յարակից իրեղէններով բեռնաւոր-
ուած: Միւս անկիւնը հասարակ
փայտէ տախտ մը, որու վրայ կիսո-
վին ծալուած անկողին մը կը հանդ-
չէր թերմաչ կապերով մը մէջ փաթ-
թուած, մօտը աղտոտ սնտուկ մը:
մէկ պատի երկայնքին նստարան մը,
որու վրայ րոգնած դէմքերով ու այ
լազան հագուստներով մարդերու շարք
մը կօրօրուէր, իւրաքանչիւրն իր
գլուխը աջակողմեան զբացիին ուսին
հանդիցուած: Իսկ ասոնց դիմացը
խսիրի մը վրայ դէ՛ առ դէ՛մ ծալա-
պատիկ նստած էին երկու փաթթո-
ցաւորներ, որոնք երկիւղած լուռ
թեամբ մը խաղող ու պանիր կու-
տէին:

Հագիւ աթոռ մը գտած էի, երբ
խանկէճին, իր պաշտօնական հագուս-

Ինչպէս արդէն գրուեցաւ, տաճ-
կական դեսպանին պնդումներուն
վրայ, Թուրքիայէն վերջերս փախած
երկու հայեր անակնկալ կերպով ու
առանց պատճառի օր մը ձերբակալ-
ուելով՝ աքսորուեցան Բլէլիւս: Այս
դէպքը զանազան տարածայնու-
թեանց տեղի տուաւ: Որովհետեւ
հոս, բացի իրենց կուսակցական շոյ-
ղակներէն ոչ ոք գիտէր անոնց ո՞վ
ըլլալ կամ ուրկէ եկած ըլլալը Ը-
սուեցաւ որ նոյն իսկ այդ ընկերնե-
րուն կողմէն եղած զրպարտութեանց
դոճեր էին անոնք, որովհետեւ կե-
րեւայ թէ, տեղույս մեր շոյքերը շատ
համակիր չեն եղեր այդ երկու պա-
րոններուն, ուրովհետեւ անոնք շատ
անգամ իրենց երեսին կը զարնեն ե-
ղեր իրենց ըրած ստորութիւնները:

Այսօր սակայն այդ պարոնները
ազատուած են շնորհիւ մեր ընկեր
Օ. Գի, որ գործով Սօֆիա գացած
ըլլալով, իբրեւ ազնիւ հայ եւ իր
պարտականութեան գիտակից, ուղ-
ղակի կը դիմէ ներքին գործոց նա-
խարարին եւ խնդիրը հասկցնելով,
կը պարզէ թէ զրպարտուած այդ ան-
ձերը զո՞րէր էին զանազան սնամէջ
թշնամութեանց ու կիրքերու եւ կը
խնդրէ անոնց ազատումը, նախա-
րարը կը խոստանայ եւ կը գործադ-
րէ իր խոստումը: Երեք երկտասարդ-
ները ազատուած են, Այս ազատա-
րարը այն ընկերն է, որ տեղույս
հացկատակներէն կը հալածուէր իբր
Վարդօի համակիր եւ պաշտպան, եւ
որուն վրայ ըմբոսկան փորձեր ընել
կը մտածէին երբեմն մեր քաջարի
հերոսները:..

Մպտեալ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Գերմանո-թրքական զինակցու-
թիւն մը կազմուած է ժամանակէ մը
ի վեր, ընդդէմ Անգլիոյ եւ Ֆրանսա-
յի, Թուրքիա կերպէ իր փայտայած
համըստական ընդարձակածաւալ
պետութեան սահմանները տարածել
եզրիպտոսէն մինչեւ Պարսից ծոց,
Թուրքիայէն մինչեւ Սեւ ծով: Իր թեւ
ու թիկունքն է Գերմանիան, որ կը
ջանայ Թուրքիան գործիք ընելով
գերմանական գերիշխանութիւն մը
հաստատել հոն քաղաքականապէս ու
տնտեսականապէս, ի վնաս Անգլիոյ
եւ Ֆրանսայի շահերուն:

Վերջին Թուրք-եգիպտական եւ
Թուրք-Պարսկական վէճերը պարզա-

տէն աւելի մաշած դէմքով ծերուկ
մը՝ մտեցաւ:

— Զօրպաճի՛, շաքարով կը խը
մէք թէ պա՞րզ:

Այդ տրամադրութեան և և այդ
մաքրագարք մթնոլորտին մէջ ո՛չ
շաքարովին ախորժակ ունէի եւ ոչ
ալ պարզին, բայց և այնպէս մարդու-
կին ափը քոստուննոց մը դնելով՝
պարզ մը ապսպրեցի եւ աչքերս փա-
կելով դեղի պէս վար տուի:

Այդ ծակին մէջ մէկ ժամէ աւելի
սպասել հարկ եղաւ: Շոգէն ու սրտ-
նեղութեան թերեւս ճաթէի, եթէ
ներսի կեանքը շուտով շահեկան ո-
գեւորութիւն մը չտանար: Սրճա-
գործին աշխատները անընդհատ կը
մտնէին ու կիլէին ձեռքերնին սուր-
ճի սարքերով, գրասենեակներու ծա-
ռաներ կուգային ո՛րք նարկիլէ տա-

պէս Գերմանիոյ դրդումով կատար-
ուած ցոյցեր են: Այդ տեսակ ցոյցեր
նոր չէ որ տեղի կուենան Անգլիոյ
եւ Ֆրանսայի դէմ, Գերմանիան աս-
կէ 10 տարի առաջ Թուրքիա հարա-
ւակողմը մէկ քանի տեղական ցեղա-
պետներ ձեռք անցնելով, գրգռեց
զանոնք Ֆրանսայի դէմ, որպէսզի
այս վերջնոյն ձեռնարկած բարենո-
րագումները ջուրը ձգէ: Այն ատեն,
Ֆրանսա Գերմանիոյ դիտաւորու-
թիւնը ըմբոսկելով՝ ուղղակի Թուրքու-
զի ազդեցիկ պետերուն առաջարկեց,
ապագայ ամէն պատահականութեան
ատաղձն առած ըլլալու համար, ճանչ-
նալ եւ ընդունել Ֆրանսական գե-
րիշխանութիւնը: Թուրքուզցիք հա-
մաձայնեցան եւ խնդիրը կարգադ-
րուեցաւ: Այն ատեն, Գերմանիա իր
ծրագիրներուն շուրջ ինչալը տես-
նելով՝ Պօլսոյ ճիւղին միջոցաւ բուն
իսկ Թուրքիա մէջ գործակալներ զը-
տաւ խոռովութիւններ առաջ բերելու
համար, Բայց, Ֆրանսա կրկին
ճարպիկ փրթաւ ու սեւ է վտանգ չի
պատահեցաւ:

Այն ատեն, Գերմանիա, Թուրքիայէն
յոյսը կտրած, իր սլաքները ուղղեց
Եգիպտոսի դէմ, միշտ կարմիր Սու-
թանին կոնակը պահուած: Սու-
թանը նախ Սուտանի մը խնդիր հա-
նեց եւ զայն գրաւելու ելաւ: Բայց
Սարթուս-Կարմիր ծովի երկաթուղին
զոր Անգլիան անմիջապէս շինեց, այդ
ջանքերն ալ իր սկզբնաւորութեան
մէջ խեղդեցին: Հիմայ Թապաի խընդ-
րով՝ կուզէ նորէն արձարծել եգիպ-
տական հարցը եւ Արաբիոյ սուրբ հողե-
րը կեազուր Անգլիոյ կողմէ ապագայ
գրաւումի մը հաւանականութեանն
ազատ պահելու համար, երկաթուղի-
ներ կը հաստատուէ: Իր երկաթուղի
ստացուածքները, շնորհիւ Գերմանիոյ
եւ Աւստրիոյ զինակցութեան ու եւ է
վտանգէ ազատ ըլլալով՝ Թուրքը իր
ջանքերը կը կեդրոնացնէ Պարսկաս-
տանի սահմանները ձեռք անցնելու:

Անգլիոյ համբերութիւնը սպասած
է այլ եւս, կը գրէ «Թիպիլին» թեր-
թը, որ ներկայ կառավարութեան
բերանն է: Անգլիա որոշած է կըտ-
րուկ ըլլալ: Վերջին անգամ զու-
մարուած նախարարական խորհուրդը
որոշած է զինուորական շարժումներ
ընել: Եգիպտոսի անգլիական զօրքե-
րուն թիւը 3000 է 5000 ի պիտի
բարձրանայ, Իռլանտայի մէջ զանուոզ
տրակոններու զօրագունդը, թնդա-
նօթածիգներու եւ Մալթայի հետե-
ւակներու զօրաբաժինները հրաման
ստացած են փութով Եգիպտոս ճամ-
բայ ելլել: Միւս կողմէ Միջերկրականի

ներս, ո՛րք սուրճ ապսպրելու և որն
ալ «ապախութի ըպրը» լեցնելու, մի-
եւնոյն ատեն չմոռնալով առիթէն
օգտուելու և ոտքի վրայ իրենք ալ բա-
ժակ մը սուրճ խմել փոխադարձաբար
թարմ նորութիւններ հաղորդելով ի-
րարու: Երբեմն ալ դուռը կէս մը
կը բացուէր և բարձրաձայն անուն
մը կը արուէր, որու վրայ նստարանի
շարքէն մէկը կը քակուէր, իսկ
միւսները մոռտալով ու աչքերնին
չփելով վայրկեան մը իրարու երես
նայելէ յետոյ՝ բացուած տեղը ան-
միջապէս կը փակէին ու կրկին կը
չարուակէին իրենց ալիկերպ ծածա-
նուած: Վերջապէս իմ անուկս տըր-
սեցաւ և իսկոյն վեր ցատկելով հե-
տեւեցաւ ոստիկանի մը որ զիս վա-
րի յարկը սենեակ մը առաջնորդեց:
(Շարունակելի)

նաև տարբեր զոր Մալթա կը գրա- նուի, կը պատրաստուի ծովային ցոյցեր ընել նոյն իսկ թրքական ջու- րերու մէջ, Թրքիանի կը յարէ որ եթէ Թուրքիա յամառի իր պնդումնե- րուն մէջ եւ շարունակէ զլիսացաւ պատճառով Անգլիոյ փառաւոր զաս մը պիտի ստանայ այս անգամ:

Սպասենք եւ յուսանք:

Մ.

Մ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ԵՎ ԸՆԿ.

Ընդհ. Վաճառական-Գործակատարներ

Կընդունուին ամէն կարգի յանձ- նարարութիւններ Անգլիական ու է տեսակի ապրանք համար: Նմանա պէս կը տրուին պատուէրներ:

Աւելի մանրամասնութեանց համար դիմել մեր մասնաւոր գործատեղին:

8-9 New Street Bishopsgate, London E. C.

Ա. Ռ. Ա. Ն. Չ. Ա. Ր.

ՎԵՏԻ ԾԻԾԱՂԸ

(Ժողովածու երկերի)

— 3 —

Ժամանակակից թրքական կեանքէ վէպիկներ, պատմուած գողտրիկ ու հետաքրքրաշարժ լեզուով:

Դիմել ՎՄՌԻՉԻ Խմբագրութեան Թիֆլիս:

Գին 1 ռուպլի:

Գ. Ե. Ղ. Ո. Ի. Ի.

Ի. Պ. Ս. Ս. Կ. Վ. Ա. Ն. Ե. Ր. Ո. Ի.

Գեղ. Ո. Ի. Ի. իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական և գրական բովանդակութեամբ սկսած է հրատարակել, և ընդ փոյթ լոյս կը տեսնէ Վենետիկի Միջմարտի հարց տպարանէն: Կովկասահայ մեծ գանձուածը փութկոտորէն սփռից արկածեալ թրքահայը. հիմա ինքն է լացողը, ինքն է վիճաւորուածը, և ինքն է սովի և կրակի մատնուածը. այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի մնար և Գեղունիին, որ Կովկասահայ- յուն սրտին մէջ համակրանքի բա- ժին մ'ունի Ս. Ղազար որոշած է 1000 օրինակ Գեղունի (1906) փու- թացնել թիֆլիզի ի նպաստ կովկասա- հայ արկածեալներու յանձնաժողովին, ընդհանուր հայութեան այն ամէն անհատ որ տուակալներու գանձա- նակին մէջ համեստ գումար մը—10 ֆր. նետելու կարողութիւն ունի, ցան- կալի է որ զիմէ այդ յանձնաժողովին ուսկից փոխարէն իր բարեգործու- թեան, կը ստանայ նոր հրատարակե- լի Գեղունիին, որուն կատարելութեան համար թերթին միևնոյն վարչու- թիւնը ամէն ձեռք ու ջանք կը թափէ և աւելի՛ եռանդով:

Գեղունիին այս անգամ ևս ունի յայտարարութեանց բաժին, որուն մասնակցելու կը հրաւիրենք մեր նշանաւոր ամէն կարգի վաճառա- կանները:

Գեղունիի բաժնեգրին է 10 ֆրանկ Գեղունիի համար լուսանկարներ, յայտարարութիւններ և նամակներ յղել մեր սովորական հասցէին:

Մ. Ղազար Վ. Ը. Ի. Ս.

(Իթալիա)

Մ Ո Ւ Ր Ճ

Ա. մ. ս. ա. գ. ի. ր. Գրական. Հասարակական և Քաղաքական Բ. ա. մ. ն. և. գ. ի. ն. ր. Արտասահմանի համար տարեկան 12 ռուպլի Վեցամսեայ 7 ռուպլի Հասցէ՝ Րէտաքսիօն տըլա րը վիւ Մ Ո Ւ Ր Ճ (Կովկաս) Թիֆլիզ

ԲԱԶՄԱՎԵՊ

Հ. Ա. Ն. Դ. Ի. Ս. Ա. Ր. Ա. Ն. Ա. Ս. Ս. Ա. Գ. Ի. Ր.

Գրական. Բանասիրական. Պատ- մական. Կրթական և Գիտական 63 րգ. ՏԱՐԻ

Հ. ա. տ. ր. Կ. Գ. Տարեկան Բաժնեգրին է 10 Ֆր. Դիմել՝ Րէտաքսիօն տըլա րը վիւ Մ Ո Ւ Ր Ճ Վ. Ը. Ի. Ս. Լ. ա. զ. ա. ր. Վ. Ե. Ն. Ի. Ս.

« Ա Ր Ծ Ի Ի »

Կի ս. ա. մ. ս. Ե. ա. յ. Ազգային, Գրական, Քաղաքական Տարեկան բաժնեգրին է մէկ տո- լար Ամերիկայի, 6 ֆրանք ար- աասահմանի համար: Դիմել հետեւեալ հասցէին՝ Էտիգօր օֆ «Արծիւ» Բ. Օ. Պօքս 2191, Պոսթօն Մաս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ս

Պօլսէն կը հեռագրեն թէ՛ ամ սոյս 18 ին Պօլսոյ պարսից դեւս պան Միրզա Բիշա խանը գարձեալ Բ. Գուռը գացեր է տեսակ- ցելու:

Պարսից դեւսպանը մանրամասն նկարագրած է այն վտանգաւոր կացութիւնը որ կը տիրապետէ պարսկական Լահիճան նահանգի մէջ, Այս վերջին երկրաբաժնի վրայ գեմ գիմաց կը գտնուին պարսիկ և թուրք վիճուորները: Միրզա Բիշա խանը սպառնացեր է Պօլսէն հեռանալ եթէ միջա- դէպը անմիջապէս չը յարգար- ուի:

- Կիւնդէր—Շէլզիլիկ—Հուլ- տայն իշխանը, Գերմանիոյ կայս- րուհին եղբայրը, իր կողակիցը և աղջիկը հետը ունենալով Պօլիս ժամանած է, Գերմանական դեւս- պանը իշխանը և իշխանուհին դիմաւորելով բարի գալուստ մաղթեց:

— Եգրպտական հարցի մասին Բ. Դրան և Անգլիոյ միջեւ ծա- գած միջադէպի առթիւ ուղղուած հարցապնդումին Անգլիոյ արտա- թին գործոց նախարար Սթր Կրէ- յը այսպէս պատասխանած է.

Թուրքիան Թապա քաղաքի հետ Սինաիան թերակղզիի հո- ղաբաժնի մէկ մասը կուզէ: Անգ- լիան կը փափաքի որ բոլոր սահ- մանեան գիծը որոշուի, իսկ մին- չեւ այն ժամանակ պէտք է որ թուրք վիճուորները եգրպտական

ե կիւն եւ քաղաքին, սակայն Բ. Դուռը կը մերժէ այս աղաչաբ պա- հանջը: Էլ-Արիշի սահմաններ- շերու տեղափոխման համար, Ե- պարքուր տեղոյն վրայ յանձնա- խումբ մը ուղարկել և առջի սահմանի հաստատման մասին հրաման տալ խոստացած է:

— Յէյլի բաշան Սանալի մէջ փակուած, ամէն օր օգնութիւն կը սպասէ. թէ ժամանելու ըլլայ, նա կը մտադրէ Մահմետ Եահայի Պէտուին Վահապիդներու վրայ յարձակիլ, սակայն օգնութիւնը չը հասնի (Մ. Խ. հասնելիք սլ չունի) և նա ձեռքերը կապուած ստիպուած է սպասել: Այս մա- մանակամիջոցիս մէջ ապստամբ- ները իրենց բանակը կը կազմա- կերպեն, Յէյլի բաշայի բանակը շրջապատած: շարքերնին կը սեղմեն, վայրկեանէ վայրկեան յարձակումը սպասելի է: Տիրա- պետող տաքուածները հետզհետէ անտանելի կը դառնայ, Պօլսոյ զինուորական նախարարութիւնը ասկէ կը հետեւցնէ թէ զօրագն- դերը չպիտի կրնան դիմանալ մինչեւ վերջ: (Մ. Խ. Անպատճառ ապստամբները թուրք զինուոր- ներուն լաւ ջարդ մը տուած ըլ լալու են):

— Իրէքի, Բրիզընի և մօտա կայ նահանգներու մէջ Այպանա- կան լուրջ ապստամբական շար- մուսմը տեղի ունեցած է: Այս ապստամբական շարժումը վրդո- վեցուցիչ կերպարանք մը ունի, որովհետեւ համախմբումի վայ- րերը թուաւոր և իրարմէ հեռու են: Անկարգութեանց առաջը առնելու համար Շէմշի բաշան հրահանգ ստացած է: Հին Սեր- պիոյ բնակչութիւնը շատ մեծ մտատանջութեան մատնուած է:

Բ Ո Ւ Ս Ի Ա

— «Պարտա» լրագիրը. հա- լաստի աղբիւրէ կիմանայ թէ՛ նորակազմ նախարարութիւնը հե- տեւեալ անձնաւորութիւններէ կը կայանայ:

Նախարարապետ—Կորէմիդին, նախկին ներքին գործոց նախա- րար, Գողովցեղ—Եւմտից նա- խարար, Սիւրիբին, հիմայ Սարա- գովի կառավարիչը—Նախարար ներքին գործոց, Շէլզիլիկիով— դատական նախարարի օգնականը դատական նախարար, Ֆոն Գո- ուֆուան—լուսաւորութեան նա- խարար, իշխան Կալիցին—հա- ղորդակցութեանց, իշխան Շի- րինսքի Շահմազով—դատախաչ Սինոդի:

— Ռուս յեղափոխական շրջա- նակները կը հուսատեն թէ՛ ռուս ստիկանութեան մարդիկը սպան- նած են Կարունը, Յունվար 9 ի գաղտնիքներու երեւան գալը մէկ անգամ ընդ միշտ արգիլելու նը- պատակով: Վերոյիշեալ շրջա-

նակները կը պնդեն թէ՛ Կարուն քահանան Լուսիոյ մէջ գտնուած բարձր դիրք ունեցող շատ մը անձնաւորութիւններ խայտառա- կելու միջոցներ ունէր: Յեղա- փոխականներու համար անոր մա- հը անօգուտ է, որովհետեւ նա յեղափոխութեան բնաւ զիստ մը չէր հասցներ:

— Կոստ Վիթէի պաշտօնէ հե- առնալը, Վիլնայի քաղաքա- կան շրջանակներու վրայ շատ վատ ազդեցութիւն ներգործած է: Կոստ Վիթէի անկումով յետա- գիմականները մեծ յաղթանակ կը տանին, կը կարծուի թէ Ռու- սիան մատնուելու է վերստին ա- նել վիճակի: Վիթէի անկումը շատ անհաճու ազդեցութիւն մը ներգործած է ծրանսայի սեղա- նաւորական շրջանակներու վրայ:

Վարչապալի մէջ, զինուոր մը յարձակելով Աւստրո-Հունգա- րական հրապտոս, Ուկրաին Ապ- րանֆ ռիվա ի վրայ, լաւ մը զա- նի կը տփէ:

— Ազնուատու Ռոլոնիացիներ, Սլասովիչի նախագահութեամբ, փառաւոր ճաշկերոյթ մը տուած են պ. Անադոլ Լըրուա Պօլիէօյի, որ շատ մը գրուածքներ ունի Ռուսո—Ռոլոնիական համաձայ- նութեան մասին: Այս ճաշկերոյ թի ժամանակ արտասանած բա- նախօրութեան մէջ Անադոլը շեշ- տած է թէ Յիւանսան Ռոլոնիացի- ները միշտ սիրած ու անոնց բա- րիբը մտածած է:

ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարական երեսփոխանա- կան ընտրութիւնները կը շա- րունակուին: Մինչեւ հիմայ ե- ղած ընտրութիւններու մէջ մե- ժամասնութիւնը շահած է Գո- շուգեան կուսակցութիւնը:

Հունգարական անկախու- թեան կուսակցութիւնը տարած յաղթանակը, այս ընտրութիւն- ներու ամենանշանակելի ե կական կէտն է:

Երբեմնի ամենազորեղ ազատա- կան կուսակցութիւնը շարաշար յաղթահարուած և անկարողու- թեան դատապարտուած է:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Այս տարի Մայիս 1 ըն. տ ա- մէն տեղ խաղաղ անցած է, մի- այն Յրանսայի մէջ տեղ տեղ ե- ղեր են ընդհարումներ ու ձեր- բակաւումներ: Չբրբակալները 2 օրէն մինչեւ 6 ամիս բանտար- կութեան դատապարտուած են— Գերմանիոյ և Աւստրո Հունգա- րիոյ մէջ տեղի ունեցած գործա-ւորական թափօրները հոյակապ ու պատկառելի, սակայն խաղա- ղասիրական ոգով տոգորուած են եղած: